ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 15.12.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ 2024 թվականի ընթացքում Երևան համայնքի Աջափնյակ և Նոր Նորք վարչական շրջաններում նախատեսվում է կառուցել համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցներ, որոնցում առկա կլինեն խաղային մարզաձևերով մարզվելու համար նախատեսված մարզադահլիճներ: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության կողմից տարվում են մեծ աշխատանքներ Երևան համայնքում մանկապատանեկան մարզադպրոցների ցանցի ընդլայնման, դրանց նյութատեխնիկական բազայի շարունակական արդիականացման համար: Տևական և արդյունավետ աշխատանքների շնորհիվ առաջիկա տարիների ընթացքում հնարավոր կլինի ստեղծել բազմաֆունկցիոնալ մարզադահլիճներով սպորտային կազմակերպություններ, որտեղ մեր երեխաներն ու պատանիները կզբաղվեն թե՛ բասկետբոլով, թե՛ խաղային այլ մարզաձևերով:

Տեղեկացվում է նաև, որ մասնավոր հատվածի և ՀՀ բասկետբոլի ֆեդերացիայի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն նախատեսվում է Նորք-Մարաշ վարչական շրջանում, Երևանի հեռուստաաշտարակի հարևանությամբ կառուցել ջեռուցման և հովացման համակարգով մարզական կառույց, որն իր մեջ կներառի բասկետբոլի մի քանի խաղահրապարակներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ